Հերոսներ, որոնք մեր կողքին են

«Գուգարք» վաշտը 20 տարեկան է

«Հիմա ծիծաղելի է թվում, որ 4 որսորդական հրացանով 15 տղամարդ գնում էինք մարտի»,- «Հատուկ գնդի» ստեղծման պատմությունն է հիշում Արցախյան պատերազմի վետերան Պետրոս Անդալյանը: 1990թ.-ի սեպտեմբերի 20-ին ստեղծվում է «Հատուկ գունդը»: 1991թ.-ի ապրիլի 15-ին «Հատուկ գնդին» կից ստեղծվում է «Գուգարք» վաշտը՝ Արարատ Թունյանի հրամանատարությամբ: Սկզբում վաշտում ընդգրկվեց 26 մարտիկ, 1992թ.-ին նրանց թիվը հասնում է 81-ի:

Վաշտը մարտական մկրտություն ստացավ Նոյեմբերյանի պաշտպանական մարտերում: Բարեկամավան գյուղի մոտ 1991թ.-ի մայիսի 6-ին զոհվում է Յուրա Թամրազյանը: «20 տարեկան էր, նոր էր ամուսնացել, մահից հետո ծնվեց որդին, որին հոր անունն են դրել»,- ասաց Պ.Անդալյանը: «Իմ ծննդյան օրն էր, Յուրան ձեռքերիս մեջ մահացավ: Դա մեծ մարտ էր: Խորհրդային Միության 9 ուղղաթիռ էր մեր դեմ կռվում»,- պատմեց 68-ամյա գնդապետ Ժորա Պողոսյանը:

Դրանից հետո վաշտը մասնակցել է Արծվաշենի, Շահումյանի մարտերին: Շահումյանի շրջանի Ղարաչինար գյուղում 1992թ.-ի հունիսի 5-ին զոհվում են Սպարտակ Սահակյանը և Սամվել Քալաշյանը: ««Օղակ» օպերացիայի ժամանակ շրջափակման մեջ ընկանք: 21 հոգով պիտի ուշադրությունը մեզ վրա շեղեինք, ժողովուրդը կարողանար դուրս գալ: Պատկերացնո՞ւմ ես՝ մի քանի գյուղի ժողովուրդ փախչում են իրենց ծննդավայրերից: Մենք ունեինք 1 տանկ, որը չէր աշխատում, 2 զրահամեքենա: Մեր դեմ մի ամբողջ տանկային բրիգադ էր»,- պատմեց Տիգրան Բոյնարգյանը, որն այժմ աշխատում է թիվ 12 դպրոցում որպես ռազմագիտության ուսուցիչ: «Բոլոր մարտերում էլ ադրբեջանցիները մեզնից տասնապատիկ շատ են եղել, բայց մեր ոգին, նվիրվածությունը հաղթեցին»,- ասաց Վահագ Խաչատրյանը:

Հաջորդը Լաչինն էր: Տիգիգ1-ում զոհվեց Վաչիկ Հովհաննիսյանը 1992թ.-ի հուլիսի 29-ին, Ղոչազում՝ Սոս Թումանյանը 1992թ.-ի սեպտեմբերի 21-ին: 1992թ.-ին ստեղծվում է հայկական բանակը, կամավորներին միանում են 1-ին ժամկետային զինծառայողները: «Գուգարք» վաշտը համալրվում է 16 նորակոչիկով: Նրանցից Արտակ Քերոբյանը զոհվում է Ղոչազում 1992թ.-ի սեպտեմբերի 22-ին:

63853 զորամասի կազմում վաշտը մասնակցում է Քելբաջարի ազատագրմանը: 1994թ.-ի հունվարին Ադրբեջանը գավթում է Քելբաջարը, նորից տղաները հայտնվում են մարտի դաշտում: «Պատերազմում Կիրովականը 129 զոհ տվեց, 29-ը մինչև 1993թ.-ը, 100-ը՝ 1994թ.-ին, դա ոչ միայն «Հատուկ գնդի» տղերքն են, այլ ամբողջ Վանաձորից»,- ասաց Պ.Անդալյանը:

Կամավորներից 2-ը 15 տարեկան էին՝ Կարենը և Աշոտը: Կարենը «Գուգարք» վաշտում հոր՝ Լյովա Խաչատրյանի հետ էր: «Երբ 18-ը լրացավ, նորից տարան բանակ: Նա 3 տարի արդեն բանակում էր, Լաչինում վիրավորվել էր, պետք է սպայի կոչում տային, փոխարենը նորից 2 տարի ծառայեց»,- ասաց Պ.Անդալյանը: Դրանից հետո Կարենը հոր հետ տեղափոխվում է Ռուսաստան: Աշոտ Գրիգորյանը հիմա էլ ծառայում է հայկական բանակում, հրետանու սպա է: «Տղաներին տնից թաքուն էի միացել: Սովորում էի Երևանում՝ մարշալ Բաբաջանյանի անվան զինվորական դպրոցում: Դրա համար տանը չէին նկատում բացակայությունս, հետո համակերպվեցին, որովհետև չէին կարող հետ կանգնեցնել»,- պատմեց նա:

Ալբերտ Ասատրյանն էլ վաշտին միացել է 48 տարեկանում: Մինչ այդ ծառայել է Խորհրդային բանակում, պատմում է, որ երբ Արցախյան պատերազմը սկսվեց, ինքն արդեն «թոշակի թոքերն էր դասավորում»:

«Մեր նպատակն այն է, որ կարողանանք օգնել մեր վիրավորներին, զոհվածների ընտանիքներին»,- ասաց Պ.Անդալյանը: «Եթե կարողանում ենք ինչ-որ բանով օգնել, օգնում ենք, չենք կարողանում, լուռ նստում ենք»,- ասաց Գարեգին Աֆրիկյանը, որը ծանր վիրավորվել էր Տիգիգ2-ում: «Դեռ անելու շատ գործ ունենք, մեր զոհված ընկերների կիսատ թողածը մենք ենք անելու»,- ասաց Լորիկ Գասպարյանը: Նա վիրավորվել է 1992թ.-ի օգոստոսին, 2-րդ կարգի հաշմանդամ է:

Տղաներից շատերը համալրել են հայկական բանակի սպայական կազմը: Նրանցից է Լևոն Սահակյանը: Նա արդեն թոշակի է անցել. «Ինչքան էլ ծանր լինի, եթե այս տարիները հետ գնային, նորից սկսեի, նույն ճանապարհը կընտրեի»,- ասաց նա:

Էջի նյութերը՝ Տիրան Մանուչարյանի